ցին տան նմա թուել զկանթեղս և զպատկերս և զայլ իրս Հայոց, և նորա եկեալ պատմէ վարդապետաց զոր արարին Լատինք, բայց զոր ինչ խօսեալ էին 'ի միջի իւրեանց, զայն ոչ ետան 'ի վեր։ Թէպէտ և Հայք մեղադրեցին զնա։ Թէ չէր օրէն ինքնաբերաբար և առանց գիտութեան նոցին, միայն բանիւ Լատինաց թուել զարդս եկեղեցւոյն Հայոց, և ապա դարձ արարին յԵրուսաղէմ, (յ2 Յուլիսի)։ Լատինք յամառեալ 'ի բանս իւրեանց ոչ անսացին բանից Քաղաքապետին և փոխանակի Դատաւորին, և դարձեալ՝ ըստ առաջնոյն սկսան յանդգնութեամբ վարիլ ընդ Հայս, խթել զկարգաւորս, կործանել զգրգակալն և անցանել 'ի միջոց նոցա, և 'ի տաճարին Ս. Յարութեան աւել ածել 'ի սեփհական տեղիս Հայոց։

Քաղաքապետն խնդրէր դրամ 'ի Հայոց իբր օգնութիւն զի պատուիրեալ էր նմա Կուսակալն պատրաստել տիկս ջրոյ վասն ճանապարհի ուխտագնացութեան։ Եւ 'ի բացասելն Հայոց՝ 'ի մէջ բերէր զխռովութիւնն Բեթղեհէմի՝ թէ որպէս դադարեցոյց զաղմուկս Ֆէլլահաց, եւ աղատեաց զինքեանս 'ի տուգանաց, և իբրեւ այնու ոչ կարաց շահիլ ինչ, գրեաց գիր յորդորական առ Թէոդորոս Պատրիարք, և յուսադրէր զնա չհոգալ ինչ վասն Լատինաց, եւ թէ՝ յանդիմանեալ իցէ զթարգման նոցին, եւ պատուիրեալ չյուզել զխռովութիւն, և թէ՝ չիք խտիր 'ի մէջ մեր և ձեր, զի որպէս հոգամ զհանգիստն ձեր, պարտիք հոգալ և դուք զմերն և այլ սոցին նման բանք։ Եւ իբրեւ ոչ կարաց որով և իցէ իւիք թակարդել զնոսա, առաքեաց զԳանձապետն և խնդրէր զոնէ առ նուազն տալ 10,000 դահեկան, և այն իբր բարութիւն մեծ։ Տեսեալ Հայոց թէ ոչ կարեն զերծանիլ 'ի ձեռաց նորա, ետուն սակաւ ինչ, այլ նա յետս դարձոյց զայն, և 'ի սաստել Աւետիս թարգմանին, լռեաց։ Դիոնէսիոս վարդապետ բազում դանկատանս գրէ զառնէս զայսմանէ, այլ 'ի պատմել զբովանդակ գործս նորա, ամփոփէ զգրիչ իւր։

Կուսակալն Դամասկոսի 'ի սմին ամի ոչ էլ յայցելութիւն գաւառաց, որպէս օրէն էր, այլ փոխանակ իւր առաքեաց զԲեհահեայ Իսրահիմ աղա։ Նորա հասեալ զօրօք նստաւ 'ի քաղաքն Նային։ Լուեալ գլխաւորացն այլազգեաց գնա-